ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1965 Общественные науки

Հ. Հ. Գասպարյան

ՄԻ ԴՐՎԱԳ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՑ

«Իթթիհատ վե Թերագգը Ջեմիյեթի» (Միություն և առաջադիմություն ընկերություն) կառավարության հայաջինջ ծրագիրն ի կատար էր ածված նրա 1915 թ. դիվային հրամանով։

Պատմական Հայաստանի գավառների բոլոր տղամարդիկ, ներառյալ երեխաները, անխտիր սրի էին քաշված...

Օսմանյան կայսրության մնացած բոլոր անկյուններում բնակվող հայերը, բացի Կ. Պոլսից և Զմյուռնիայից, տեղահան արվելով, բռնի քշվել էին Սուրիո կիզիչ ավազուտները՝ ճանապարհին կողոպտվելով, զանազան տանջանքների ենթարկվելով, քաղցից, ծարավից, տապից մեռնելով։

Կ. Պոլսից ևս, բացի 200 հայ ականավոր մտավորականներից, աքսորվեցին 22 հազար գավառացի հայ սլանդուխտ տղամարդիկ (բոլոր տարիքի), որոնց թվում նաև՝ ես։

Անատոլիան Եվրոպային և Իրաքին կապող, այսինքն Կ. Պոլսո ասիական մասից՝ Հայտար փաշայից մինչև Պարսից ծոցը գերմանական ընկերությանը պատկանող երկաթգծի առանձին հատվածներն իրար միացնող, աշխատանքները տարվում էին մեծ թափով, անգլո-ֆրանսիական հարավային ճակատը զինվորներ հասցնելու համար։

Գործող երկաթուղին բաժանվում էր երեք հատվածի։ Առաջին հատվածը Կոստանդնուպոլսից մինչև Բոզանթիի, երկրորդը՝ Թարսուսից (Տարսոն) մինչև Օսմանիա, իսկ երրորդը՝ Ռսլահիայից մինչև Սուրիա։

Երկաթուղու կառուցման համար պատրաստի, էժան աշխատուժ էր հայ աքսորյալ զանգվածը։ Աշխատունակ տղամարդ ունեցող ընտանիքներին թողնում էին աշխատեցնելու համար, իսկ մնացածներին քշում... Այս ևս մշակված ծրագիր էր երկաթուղին շուտափույթ կառուցելու համար։ Իսկ աշխատանքներն ավարտելուց հետո այս տղամարդիկ իրենց ընտանիքներով ևս արժանանալու էին մյուսների բախտին, թերևս ավելի սոսկալի ձևերով։

1915 թ. ուշ աշնանը Ռագայից[1] մահվան ճիրաններից ճողոպրելով ետ էի փախել և 1916 թ. գարնանը խառնվել հայ աքսորական աշխատավորներին «Ինթիլլի» կոչված փոքր լեռնահովտում, ուր օր ու գիշեր անդուլ աշխատանք էր գնում չորս ստորերկրյա ուղիներում։ Դրանցից մեկը Այրան թունելն էր 2100 մ երկարությամբ, մյուսը՝ Քելլեր թունելը 500 մ երկարությամբ։ Այս գծամասում, բացի Այրան թունելի վրա աշխատող բանվորներից, կային ավելի քան 3000 հոգի (իմ համարը 2864 էր)։

Մյուս երկու փոքր ստորերկրյա ուղիների շինարարական աշխատանքները վաղուց ավարտվել էին։

---

[1] *Ռագան փոքր քաղաք է Տեր էլ Զորի մոտ։*

1916 թ. հունիսի կեսերին Քելլեր Բունելի աշխատանքներն ավարտվեցին, իսկ Այրան Բունելն ավարտվելու մոտ էր.

Հունիսի 23-ին, կիրակի օրը, մեզ արգելեցին կացարաններից հեռանալ։ Տեղեկացանք, որ Թալիաթ ու Լնկեր փաշաները եկել են գծի աշխատանքների ընթացքին ծանոթանալու... Լսեցինք նաև, որ Թալիաթը ստամոքսի սուր խիթեր է ունեցել և դոկտ. Ֆիլիպը (հայ) իսկույն բուժել է. (արդյոք խիթերը հայ տեսնելո՞ւց էր ունեցել)։

Հունիսի 27-ին, ամառվա ջեռուցիչ արևը նոր էր ճառագայթները սփռել Ինթիլլիի ձորալանջերի թփուտներին։ Մենք սովորականի պես հագնվում էինք աշխատանքի գնալու, երբ հանկարծ ականջներիս հասան ոստիկան զինվորների ձայները. «Շուտ արեք, հագնվեք ու դուրս եկեք»։ Նրանք դեռ գիշերվանից պաշարել էին բոլոր կացարանները, որ մարդ չփախչի։ Ես ու Գեղամ Մելիքյանը (Սան Ստեֆանոյից աքսորված) որոշեցինք իսկույն նետվել ձորի թփուտների մեջ։ Դուրը բացեցինք։ Եվ ի՞նչ, դռան առաջ ցցված էր 3 ոստիկան զինվոր, զենքը ձեռներին...

Ոչ ոք չէր իմանում, թե ի՞նչ է կատարվելու, սակայն ներքուստ հասկանում էինք, որ մահվան ենք գնում։ Մինչև բանվորներին կարգի կշարեին, ես ծլկեցի, մտա երկաթագործի մոտ։ Քիլիսցի Լյուդվիգի կրպակ-արհեստանոցը և երկուսով դուրը ներսից պինդ փակեցինք։ Լուռ ու մունջ կծկված նստել էինք։ Դուրսը կանանց, երեխաների ճիչ ու վայնասուն, մարդոց աղաչանք, ժանդարմի հայհոյանք խառնվել էին իրար։

Անցավ մոտ երկու ժամ։ «Մենք փրկվեցինք», մտածում էինք, երբ հանկարծ մի ուժեղ հարված կպավ կրպակի կիսախարխուլ դռան, երկրորդը, դեռ երրորդը չհասած, մեր «հանցանքը» թեթևացնելու նպատակով դուրը բացելիս հրացանի փողի մի հարված կպավ գլխիս, որից խուսափեցի։ Երկու ոստիկան հրացանակոթով խզակոթներիս տալով մեզ տարան հավաքատեղ, որն ընդհանուր գրասենյակի առջևն էր։ Այնտեղ հավաքել էին միայն տղամարդկանց՝ աշխատավարձ վճարելու։ Մինչև երեկո կիզիչ արևի տակ, սոված-ծարավ, պահակ ոստիկանների շղթայով բոլորված սպասեցինք։ Ոչ մեկի անունը դեռ չէր կարդացվել փող վճարելու համար։ Ոստիկաններն աստիճանաբար օղակը սեղմում էին, նույնիսկ իրար վրա նստեցնելով։ Վերջապես սկսեցին մի քանի հոգու անուն կարդալ և հեռվից փող շպրտել նրանց։ Հազիվ 10—15 անուն կարդացել էին, երբ ներկայացավ տեղի մշտական հսկիչ, հարյուրապետ Սապրի բեկը. որը դեմքը խոժոռելով, արհամարհական մի լպիրշ հայացք գցելով մեզ վրա, մտավ գրասենյակ։ Վճարումը դադարեց։ Մի քանի րոպե հետո հայտարարվեց. «Դուք գնալու եք Խարա-Բաբա[2] և Կյուկլեկ-Բողազի աշխատելու, հետևաբար աշխատավարձը կստանաք այնտեղ։ Տարբերություն չկա, մեկ ընկերություն է. հիմա արդեն ուշ է և ցուցակները լրիվ չեն»։

Սառը քրտինքը պատեց բոլորիս։ «Եթե իրոք ասված տեղը պիտի գնայինք աշխատելու, չէ՞ր կարելի ամսի վերջին ուղարկել, և ոչ ոստիկաններով պաշարված վիճակում», մտածում էի ես և թերևս ինձ նման շատերը։ Նույն-

2 Խարա-Բարա վայրը հին Լամբրոն, բնական անառիկ ամրոցն է, որն Ոշին Արցախեցին 1073 թ. իր տոհմով ու զինվորներով փոխադրվելով Կիլիկիա՝ այն գրավեց արաբներից և դրյակը ժառանգություն ստացավ Ալեքս Կոմնենոս կայսրից, իսկ Ոշինի նեբայրը՝ Բաղունին, տիրեց Տարսոնը (Թարսուս) (Հ. Հ. Զ ա ղ մ ա գ ճ յ ա ն, Ընդարձակ պատմութիւն Հայոց, Պոսթոն, 1917, էջ 423։

Իսկ եղան մարդիկ, որ այդ միաբը բարձրաձայն արտահայտեցին։ Լսող չեղավ։ Աշխատավարձի և տնտեսական այլ գործերը ղեկավարում էր երկրորդ ճարտարապետը (այս անունով էինք ճանաչում նրան) նիհար, երկայնահասակ, շագանակագույն մաղերով մի գերմանացի։ Նա լուսամուտից պլուխը դուրս հանեց, դննողական հայացք ձգելով հավաքվածներիս վրա, կարծես կարեկցական տեսք ընդունելով, գլուխը ներս քաշեց։ Ներսից լսվում էին գերմաներեն ու թուրքերեն խոսակցություններ, որը դժվար էր հասկացվում։ Սուր լսողությունս ավելի լարելով կարողացա որսալ հետևյալ թուրքերեն բառերը. «Սրանց փոխարինելու են 2000 անգլիական և ռուսական գերիներ... մեկն ու մեկը պետք է ողջ մնա...»։

Խոսակցությունը վերջացնելուց հետո դրասենյակի դռան շեմքին հայտնվեց Սապրի բեկը իր ոլորած ընչացքով, հպարտ կեցվածքով, խուզարկու նայվածքով. «Էֆրատ (զինվոր), — բարձր ձայնով խոսքն ուղղելով ոստիկաններին, որոնք ևս ձանձրացել էին սպասելուց, պատրաստ եղեք ճանապարհվելու։ Սրանց (ցույց տալով մեզ) երկուսի բաժանելով տանելու եք մինչև Բաղչա։ Համրանքով ձեզ եմ հանձնելու. մեկը որ պակսի, ոտից գլուխ պատասխանատու եք... ձեզ տեսնեմ»։ Այնուհետև առանց հաշվելու հավաքվածներիս երկու մասի բաժանեցին, շարք կանգնեցրին, յուրաքանչյուր խմբի երկու կողմը հրացանը ձգանի վրա պատրաստ ոստիկան զինվորների շղթա կապած, քշեցին...

Ես ու Գեղամը ձեռք-ձեռքի բռնած, դատարկ փորով գնում էինք։

Մեզ տարան ձորի կարճ ճանապարհով, միշտ սեղմած մեր շարքերը։ Բաղչա հասանք դիշերը։ Մեզ լցրեցին ցածր պարիսպով մի բակ, հետո՝ շենքի ներս։ Դա հայոց եկեղեցի էր, առանց հայի։ Պահակները հսկում էին ամենայն խստությամբ ու պարտաճանաչությամբ։

Լուսացավ։ Բակից դուրս գալ չէր թույլատրվում։

— Մեզ Խարա-Բաբա էիք տանելու, ինչո՞ւ եք բանտարկել,— հարցնում ենք մենք։ Պատասխան չկա։

Կեսօրին մոտ բերին երրորդ խումբը, այնուհետև կանանց ու երեխաներին (կրծքի երեխա գրեթե չկար)։ Նրանց թողին պարսպից դուրս, ծառերի տակ, գրեթե ազատ։

Երեկոյան դեմ եկեղեցու ետևի կողմը գնացի փախչելու նպատակով։ Փորձեցի քանդված շենքի լուսամուտներից ցատկել։ Հանկարծ բառաչի նման մի ձայն լսելով նայեցի. Քելլերցի Գրիգորն էր, թիկնեղ, հաղթանդամ, 50-ի մոտ մի տղամարդ, որին սվինահարեցին ոստիկան զինվորները։ «Ուրեմն այստեղ էլ պահակ կա», — ասացի ինքս ինձ և հետ վերադարձա։

Այդ վիճակում մնացինք երեք օր։ Հակառակ խստության, կանայք փոքր երեխաների միջոցով որոշ ուտելիք հասցրին իրենց հարազատներին և այլ մի քանի հոգու, բայց ջուր՝ հնարավոր չեղավ։ Մարդիկ ծարավից թուլացել էին։

Ադանայից եկան լրացուցիչ զինվոր ոստիկաններ. բոլորն էլ երիտասարդ, զինվորական դպրոցի սաներ։ Հրամանատարն էր սև, դաժան դեմքով հարյուրապետ Արգուլլահը, 40-ն անց մի վիժվածք, որին այսուհետև կոչելու եմ «Սև հարյուրապետ»։ Եկել էին նաև մի հազարապետ և Ադանայի նահանգի ընդհանուր ոստիկանապետը՝ հայերի աքսորը կազմակերպող արյունկզակ Ավնի բեկը։

Հանկարծ թնդաց Սև հարյուրապետի հետևյալ հրամանը. «ժանդարմներ, այս անգութների աստվածը, քրիստոսը ես եմ, խփեք դրանց, մի թողեք, որ նույնիսկ մի կաթիլ ջուր խմեն»։

Հրամանը լսելով կատաղի գազանների պես ոստիկանները վրա հասան ու հրացանակոթով, կոշիկի կրունկով սկսեցին հարվածել մոտակա առվից ջուր խմող մարդկանց։ Այդպես նրանք մեզ ոտքի հանեցին, հավաքեցին, շորսական կարգ շարեցին։ Ես, ըստ իմ փորձառության, կանգնել էի շորս հոգու արանքում։ Հրաման եղավ համբելու։ Ձիու վրա, մտրակը ձեռքին Սև հարյուրապետին բարձրաձայն զեկուցեցին։ «Հազար երկու հարյուր քսանհինգ հոգի»։

— Էհ, կենտ է, պետք է զույգ թողնել,— հրամայեց հարյուրապետը, աչքով նշան անելով զեկուցողին։

— Վայ մայրիկ թնդաց օդի մեջ ու խլացավ... «Կենտը» սվինահարվեց։ Ոչ ոք չէր համարձակվում ետ նայել։ Մենք հրաժեշտ տվինք Բաղչային, իսկ շատերը նաև իրենց կանանց ու զավակներին...։

Մեր ճանապարհն անցնում էր այն ձորի միջով, որտեղից օձագալար հոսում էր Բաղչա-չայ վտակը, առատ, արծաթափայլ ջրով։ Քայլում էինք առանց կարգն ավրելու. յուրաքանչյուր կողմը 34-ական ժանդարմ, հրացանները ձգանների վրա պատրաստ։ Առջևից գնում էր կրտսեր հրամկազմը, իսկ ետևից, ձիու վրա, Սև հարյուրապետը։ Մինչև իջևանելիք տեղը անցանք ոլորապտույտ հոսող վտակը 16—17 անգամ հատելով, բայց շատ քչերին հաջողվեց մի քանի ումպ ջուր խմել, որովհետև խմողին նշմարելու դեպքում տեղն ու տեղը ոչընչացնում էին։

Ազատ քայլելու համար ոտքիս քոշերը նետեցի։ Աջ կողմս Գեղամն էր, ձախը՝ մեր կացարանից, դյորթ-յոլցի (Չորք-Մարզպան) Մինասը։ Մինչև երեկո տարբեր կողմերից հրացանների պայթյուններ էին լսվում։ Ժանդարմները դատաստան էին տեսնում ցանկացածի հետ։ Մեկ-երկու նահատակվածների վրայով անցանք, առանց իմանալու նրանց ով լինելը։ Բաղչայից մի քանի կիլոմետր հազիվ էինք հեռացել, երբ շորս հոգի լավ հագնվածներ ջոկեցին, որպես «զենք ունեցողների», որոնք այլևս չվերադարձան։ Նրանցից մեկը վառվռուն երիտասարդ էր, անունը՝ Խաչիկ։

Մութն ընկնում էր արդեն, երբ մեզ հանեցին ձորի անտառուտ լանջը և տանձենու տակ ալյուրի պարկերի նման դարսեցին իրար վրա, այնպես որ, ինչպես ընկար, նույն վիճակում պետք է մնայիր, շարժվողը գնդակ կրնդուներ։ Ժանդարմները շրջապատեցին մարդկային կույտը, որ չփախչեն, բայց ո՞վ կարողություն ուներ փախչելու։ Ես այդ երեկո հասկացա, թե ինչո՞ւ մեզ Բաղչայում երեք օր սոված ու ծարավ պահեցին, որպեսզի ուժից ընկնեինք։ Այդ գիշեր քանի հոգի որսվեցին, չիմացանք, բայց նրանց, որոնց ցերեկով որոշել էին, գտան ու տարան...

Առավոտյան դեռ արևը չծագած մեզ վեր կացրին։ Ավելացել էր շարքային ոստիկանների կատաղությունն ու հայհոյանքը, որ մեր անհավատ շներիս երեսից իրենք շոգին ճանապարհ քայլելով՝ շարշարվում են։ Նրանք առանց քաշվելու ասում էին. «Քիչ մնաց, մի քանի ժամից կազատվենք ձեզնից»։

Արևը բավական բարձրացել էր, երբ մեզ նստեցրին գետի ափի լայնատարած մարգագետնի վրա, նախաճաշելու։ Մոտակա գյուղի կանայք (հավանաբար քուրդ, որովհետև չադրայով չէին ծածկված) կաթ, մածուն էին բերել, անպայման մեզ ծախելու։ Նրանք մեզանից 150 մետր հեռու նստել ու սպա-

սում էին, ըստ երևույթին՝ հրամանի։ Ժանդարմների մի մասը գնաց նրանց մոտ, քիչ հետո վերադարձավ ասելով. «էն կանայք խեղճ գյուղացիներ են, շորից բանից, ինչ որ ունեք, տվեք թող հագնեն»։ Առանց սպասելու մեր պատասխանին՝ սկսեցին իրենց ձեռքով առնել, որի վերարկուն, որի կոշիկը, որի բաճկոնը, այնթապցի Հովակիմի էլ վերմակն ու սպիտակեղենը, հավաքեցին տարան տվեցին նրանց ու փոխարենը կաթ ու մածուն առնելով կերան։ Ժանդարմները նույնիսկ բացորոշ կերպով հայտարարում էին, թե այդ շորերը Ինճիրլի-Փունար հասնելուց հետ մնալու են անտեր։

Այստեղ գնդակահարեցին իղմիտցիներ՝ Համբարձում վարժապետին, տիրացու Հակոբին և կապուտաչյա Արիստակեսին, որպես փախուստի պատրաստվողների։

Այնուհետև շարունակելով ճանապարհը դեպի Մարաշ, երբ մոտեցանք առաջին սարի ստորոտին, Սև հարյուրապետը հրամայեց մեզ երկշարք անել, ու վազեցնել, որովհետև ճանապարհը անցնելու էր ցորենի արտերի և անտառի միջով։ Հրամանը բոպեական կատարվեց. խառնվեցին, երկշարք կազմեցին և ոստիկաններն սկսեցին վազեցնել. հետ մնացողին հրացանակոթն, սվինը, դրնդակը պատրաստ էր։ Առջևի սապատաձև բարձրության լանջերին, ճանապարհի երկու կողմում դյուզի քուրդ ջահել հարսներ ու աղջիկներ հունձ էին անում մանգաղով, տեսնելով այդ, նրանք մանգաղները ձեռքներին, ապշած դիտում էին մեր գոյավիճակը։ Առաջին շարքերից մեկ-երկու հոգի կարգից շեղ էին վազում։ Կանանց հավասարվելով ժանդարմներից մեկը ցանկանալով իրեն ցույց տալ դավանակից իգական սեռին, առաջի ժանդարմին գոռաց «Ընկեր, այն «ուզուն բոյլուն» (երկայնահասակը) փախչելու է»։

Հրացանը ճայթեց, «ուզուն բոյլուն» փռվեց ու գալարվեց, բայց մոտի ժանդարմը նրան սվինով հանգստացրեց։..

Կանայք ու աղջիկները երեսները շրջեցին հակառակ կողմը, սարսափից թե արհամարհանքից, չիմացանք։

— Լավ նշանառու չես,— հեգնեց առջևից գնացող ժանդարմը,— դե հիմա տես արտի եզերքով գնացող գլուխը «յազմալու» (գլխաշորով) մարդուն։

Խոսքը դեռ չվերջացրած գնդակը սուլեց, «յազմալուի» գանգը պայթեց։ Կենդանի մարդիկ դարձել էին նշանառության խրտվիլակներ։ Երբ հաղթահարում էինք երկրորդ բարձրությունը, վաթսունին մոտ մի մարդ, հարյուրապետին խնդրեց իրեն խնայել, չվազեցնել, ցույց տալով քրքրված ոտքերը։

— Ո՞րտեղացի ես,— հարցրեց հարյուրապետը կեղծ կարեկցանքով։

— Սվազցի, բեկ էֆենտի,— պատասխանեց ծերուկը։

— Էֆրատ, ափսոս է, նրան Սվաս ուղարկիր, սվինահարիր,— հրամայեց Սև հարյուրապետը ոստիկանին։

Այդ գաղանային կարգադրությունից սարսափած, ես շտապեցի առաջ, ետևից լսելով միայն մի խուլ տնքոց։ Նույն ոստիկանը հասավ մեզ, անտարբեր իր կատարած ոճիրի հանդեպ։

Իմ ոտքերս էլ ցավում էին, սվազցուց առաջ ես էի պատրաստվում խնդրելու, բայց երբ այդ բանը տեսա, երկու ոտք էլ փոխ առա ու սկսեցի արագ վազել։ «Ընդամենը 2—3 կմ և ահա մենք չկանք... Եվ վազում ենք, որ շուտ հասնենք մեր զոհարանին...,— մտածում եմ, այս բոլորը ինչի՞ համար... հայության և Հայաստանի համար... բայց չի՞ կարելի արդյոք համակերպվել, իսլամություն ընդունել և ազատվել այս անտանելի չարչարանքներից, հարց եմ

տալիս ինձ ու պատասխանում, բայց չէ՞ որ միայն ֆիզիկապես գոյություն կունենանք, ոչ ՀԱՅ անվան տակ և բարոյապես մեռած կլինենք։ Ուրեմն լավ է ֆիզիկապես ոչնչանալ, քան բարոյապես... Սա գիտակցված նահատակություն է...»։ Շուրջս մարդ չկար, թեև ես բավական թեթևաշարժ էի, բայց ինձնից շուտ վազողներ էլ եղել են։ Որոշեցի ծառերից մեկի տակ մտնել, բայց հանկարծ ետևիցս հասան երկու քրտնաթոր ոստիկան. սկսեցի կաղալով արագ քայլել. աչքները հառեցին վրաս, իսկ ես մտածում եմ ՎԱԹԱՆԻ մասին։ Այսպիսի օրհասական ժամերին նման մտքերը, կարծես բնազդաբար, պաշարում են մարդուն։ Սառնասրտորեն սկսեցի բարձր ձայնով երգել, նույն վայրկյանին միտքս եկած, «վաթանին» նվիրված թուրքերեն հետևյալ երգը.

Ո՜վ, փառավոր մայր հայրենիք,
Ով, մայրական Օսմանիան,
Տվեցիր մեզ փառք, զարգացում,
Մատաղ է քեզ ամբողջ ազգը,
Հազար ապրի հայրենիքը[3]։

Երգեցի անվախորեն, ամեն ինչ աչք առած, «Օսմանիան» բառի առաջին «ՕՍ» վանկը «ԱՐ»-ի փոխելով, որ կլինի ԱՐՄԵՆԻԱՆ։ Զինվորները ապուշ-ապուշ նայեցին ու անցան, «քայլիր» գոռալով։ Ուզեցի ծրագիրս իրագործել, սակայն չհաջողվեց։ Ոստիկաններ կային։ Գրեթե գիտակցությունս կորցրած, կիսախելագար էի դարձել։ Ամեն ինչ մութն էր թվում։ Բայց հույսի մի փոքրիկ նշույլով առաջացա։ Պետք է ասեմ, որ իմ նկատմամբ անտարբեր էին կարծես, մեկ-երկու անգամ եղել են այնպիսի մոմենտներ, որ շատ հեշտությամբ կարող էին ինձ վերջացնել, բայց միայն «շուտ քայլիր» գոռալով բավարարվում էին. գուցե ինձնից ստանալիք որևէ բան չլինելու համար էր։

Սարի ստորոտում՝ ճանապարհի եզրին, ոչխարների ամառային կաթի համար պատրաստված մի աղբյի մեջ հավաքվել էր կրտսեր հրամկազմը, ինչ-որ խորհրդակցում էին։ Ոտքերս ինքնաբերաբար ուղղվեցին դեպի աղբյը։ Անվախ մոտեցա նրանց ու դասակապետին ասացի։

«Բաշ չավուշ էֆենդի, Դուք հոգնած կը լինեք, Ձեր պայուսակը տվեք ես շալակեմ»։

— Զէ՞ս փախցներ,— հարցրեց նա մեղմորեն, գլուխը բարձրացնելով և մի խուզարկու հայացք գցելով երեսիս, կարծես հեգնելով։

— Է, քայլելու կարողություն ունե՞մ, որ փախչելու մասին մտածեմ, — պատասխանեցի ընկճված։

Պայուսակն ու վերարկուն տվեց։ Մյուս ոստիկանը՝ թե իմն էլ վերցրու։ Համակերպվեցի և երկու պայուսակ ուսերիցս խաչկապ արած, վերարկուներն էլ նույն ձևով, դեռևս ճանապարհ չընկած, ասացի. «Էֆենդիներ, հրամայեցեք, որ ինձ բեռով չվազեցնեն և թույլ տվեք ջուր խմելու», Համաձայնվեցին։

—Հէյ, անձրևանոցով տղին մի դպչիք,—գոռաց տասնապետը և այս հրամանը փոխանցվեց ժանդարմից-ժանդարմ։

---

3 Էյ անճէմիզ շանլը վաթան,
Էյ, մատէրի Օսմանիան,
Վէրդին բիզէ շան, ֆէյզ ու շան,
Միլլէթ բյուրյութ կուրբան սահան,
Բինլէր յաշա շանլը վաթան։

Այժմ, որպես առանձնաշնորհյալ անձ, հանդիստ քայլում էի, թեև բեռս ծանր էր։

Հասել էինք սպանդի վայրը. ինձ բեռնաթափ արեցին և ամբողջով, ըստ սովորության, ծվարեցինք լայն ճանապարհի տակի արտի մեջ։

Սև հարյուրապետը, որ նախապես բլրալանջի մի քարի վրա բազմած ծխում էր, իր մոտ կանչեց կրտսեր հրամկազմին և ժանդարմներին, մի քանիսին թողնելով մեզ հսկիչ։ Ես, որպես առանձնաշնորհյալ, կաթի տուփը վերցնելով գնացի ցածից հոսող առվից ջուր բերի Ղեղամի համար։ Մինասն էլ խնդրեց, նրան էլ բավարարեցի։ Մարաշցի 50-ի մոտ մի մարդ, որ կողքիս ընկել էր կիսաուշաթափ, խնդրեց, որ իրեն մի բաժակ ջուր հասցնեմ։ Կաթի տուփն առնելով երրորդ անգամ գնացի ջրի, բայց հենց ուզում էի վերադառնալ, ժանդարմի սվինի կոնակի հարվածից գոռալով փռվեցի գետին։ Բախտավոր էի, որ հարվածը սվինի ծայրով չէր։ Դժվարությամբ վեր կացա։ Տուփը նորից լցրի ու փորսող մի քիչ գնալուց հետո արագ քայլելով ջուրը հասցրի մարաշցուն։ Նա ինձ օրհնեց...

Սև հարյուրապետը թե ինչ էր կարգադրել ոստիկաններին՝ մեզ պարզ դարձավ միայն այն ժամանակ, երբ նրանք հրացանները ձգանի վրա պատրաստ շրջապատեցին մեզ։ Իսկ մի քանի ժանդարմներ կաթի և պահածոների տուփերով առվից աղբոտ ջուր լցնելով սկսեցին բոռալ «Ջուր ուզող, գինը՝ փոքրը 25 ղուրուշ, մեծը՝ 50, ապրանք չենք ուզում, միայն փող»։ Մարդիկ ստիպված գնում էին, իսկ փողը հանելու ժամանակ «ջուր ծախողները» խուզարկու հայացքով նայում էին դրամապանակներին։ Նույն պահին թփուտների միջից լսվեցին հրացանների կրակոցներ, մարդկային ճչոցներ ու հառաչանքներ։ Չգիտենք մեզնից 10—15 քայլ հեռու ի՞նչ է կատարվում, որովհետև իրավունք չունենք գլուխ բարձրացնելու։

Մոտ կես ժամ անց Մարաշի կողմից 2 հեծյալ ոստիկաններ ներկայացան հարյուրապետին և պատվի առնելով մի թուղթ հանձնեցին։ Կարդալով այն, նա դժգոհությամբ գլուխն օրորեց ու մեզ շրջապատող ժանդարմներին «հանգիստ» հրամայեց։

Սև հարյուրապետը ցած իջավ ու խոսեց բարձր ձայնով, որով արտահայտում էր իր շնական ցասումը։ «Ծո, անհավատ շներ, — ասաց նա կատաղած, — ձեզ այստեղ սատկացնելու էինք, բայց ձեր կեղտոտ արյունը այս մաքուր դաշտի մեջ թափելով՝ դաշտը պղծվելու էր, իսկ ձեր գարշելի լեշերի հոտը շրջակայքը պիտի վարակեր։ Ուստի թագավորը ձեր կյանքը մի քանի օր էլ երկարացրեց, հրամայելով ձեր հաշիվը մաքրել Խարա-Քյոփրյուլի մեջ. (Ուրֆայից 15 կմ հեռավորության վրա, դեպի Տիգրանակերտի կողմը։ Ջոհրաբի ու Վարդգեսի սպանված վայրը), ուստի շնորհակալ եղեք փադշահից և գոչեք՝ փադշահըմ չոք յաշա. (թագավորը շատ ապրի)։ Ժողովուրդը ոգևորվեց, կարծես մոռացավ քաղցն ու ծարավությունը, ինքնաբերաբար ասելով. թագավորը շատ ապրի մի քանի օրվա կյանք պարգևելու համար։

Վերջապես `երկու դասակապետներ մեզ առաջարկեցին յուրաքանչյուրից 100 ղուրուշանոց 3-ական թղթադրամ հավաքել մինչև Մարաշ չվազեցնելու համար։ Պահանջվածը մեծ գումար էր, որովհետև շատերը չունեին։ Բայց 1500 թղթադրամ հանձնեցին դասակապետ Րիֆաթին։

Նորից շարժվեցինք ճանապարհը շարունակելու համար, այդ վայրում թողնելով բավական դիակներ, որոնցից մեկը Փրնտաձացին էր, որն իրեն գլորեց

քարից, մեկն էլ մսավաճառ Լյուդվիգը, մյուսները չիմացանք, բայց այնթապցի Հովակիմին էլ չտեսա։ Ճանապարհ ընկանք հանգիստ քայլերով, այլևս պայուսակ չշալակեցի։ Անցանք Ճիհան («Ի՛լիականի» մեջ հիշված է Պյուռամոս) գետի վերին հոսանքը։ Երբ բարձրանում էինք Մարաշի զառիվերը, արդեն սկսել էր մթնել։ Սև հարյուրապետը հրամայեց. «Զինվորներ, այս սրիկաների շատը մարաշցի է, ճանապարհներին ծանոթ, խտացրեք շղթան, որ չփախչեն, շուտ քայլեցնել և շարքից ելնողին չխնայել»։ Չվազեցնելու խոստումը դրժեց։ Դիշեր էր, երբ հասանք Մարաշի պարտեզները։ Մթության մեջ ոչինչ չէր երևում, բացի ծառերի սիլուետներից։ Լսվում էր միայն մոտակա ջրի խոխոջը։

Բացվեց առավոտը։ Եկավ Մարաշի մյութեսարրֆը (ենթանահանգապետ) ոստիկանապետի, զինվորական մի սպայի և 10—12 ոստիկանների հետ։ Ընկալահանձնողական արարողություն կատարվեց առանց կորուստի մասին հարցվելու։ Պակասում էր 307 մարդ։ Եթե 7 հավ պակասեր, մեծ իրարանցում կլիներ...։

Կեսօրին կանայք հասան մեզ, բայց շատերը մեզ հետ եղողների կանայք չէին. նրանց ամուսինների խումբը հետո պետք է գար։

Մարաշից ճանապարհը շարունակեցինք հանդիստ, ստանալով օրապահիկ հաց՝ շնորհիվ հույն սպայի։

Հասնելով Այնթապ փախա քարայրները, Գեղամին էլ հետս քարշ տալով։

Այն «մահվան դատապարտվածներից», որպես մոհիկան, այժմ կանք երկուսս, ես և Սահրատ Սելվինազյանը (Երևան, Մաքսիմ Գորկու փողոց, № 55)։ Զորք-Մարզպանցի Մինասին հանդիպեցի Հալեպում 1917 թ. ձմռանը, մարաշցի Մինասի (կարծեմ Անթոսյան) հետ աշխատում էինք Դարդանելում 1923 թ.։ Դեպքը պատմելով՝ իրար ճանաչեցինք։

А. А. Гаспарян

СТРАНИЦА ИЗ ИСТОРИИ РЕЗНИ АРМЯН

Резюме

В данной статье, написанной автором, которого постигла общая участь трагедии армян, приводятся факты из воспоминаний о кровавых событиях 1915—1916 гг., когда в результате реакционной политики правительства Иттихада Османской Турции была организована массовая резня армян — неслыханное злодеяние в истории человечества.

С территории Османской Турции было изгнано многочисленное население армян.

С целью поголовного истребления большинство их было угнано в Сирийскую пустыню, где в невыносимо тяжелых условиях они работали на строительстве Багдадской железной дороги.

По приказу Талаата 1225 человек, которые находились в подземных тоннелях, после окончания работ были угнаны в сторону Мараша, где по дороге, в местечке Кара Кепрю, было совершено массовое их истребление.

Автор данной статьи находился в числе угнанных армян и спасся бегством.